ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

Տասներկուերորդ հաղորդում

Փեսան, հարսի հասունությունը և ռազմիկ լինելու անհրաժեշտությունը՝ Աստծու թշնամուն հաղթելու համար

Գրվածքների ընթերցում. Հվի 3:29ա, Մտթ 9:15, Եբր 6:1, Հյտ 19:7

I. Քրիստոսը Փեսան է՝ Մտթ 9:14-15, 22:2-3, 25:1, 5-6, 10.

Ա. Ողջ տիեզերքում ամենացանկալի անձը Հիսուսն է՝ որպես Փեսան:

Բ. Հովհաննես Մկրտիչն ասաց. «Ով հարսին ունի, նա փեսան է»՝ Հվի 3:29ա:

Գ. Հիսուսը ներկայացրեց Իրեն՝ որպես Փեսայի՝ Մտթ 9:14-15, Մրկ 2:19.

1. Աստվածաշնչի վերջում տեսնում ենք «Գառան կինը» եզրույթը՝ Հյտ 21:9:
2. Աստծու Գառը (Հվի 1:29) Փրկագնիչն է, բայց Գառը, որը խաչի վրա տարավ մեր մեղքերը, նաև մեր Փեսան է ամուսնության համար (Հյտ 19:7):

Դ. Փեսայի ներկայության մեջ վախ գոյություն չունի. դիպչելով Տիրոջ ներկայությանը, դիպչելով Նրան՝ որպես Փեսայի, մենք դիպչում ենք Նրա սքանչելիությանը, քաղցրությանն ու թարմությանը. Նա այնքա՜ն սքանչելի է:

Ե. 123-րդ օրհներգի առաջին քառատողում ասվում է. «Տե՛ր, Դու Փեսան ես սքանչելի,/ Ում Աստված է տվել մեզ,/ Այնքան թանկ ես ու սիրելի/ Եվ գրավիչ ես այնպես»:

Զ. Գոյություն ունի Քրիստոսին՝ որպես մեր Փեսայի, վայելելու չորս ճանապարհ (կամ տեսանկյուն).

1. Առաջին՝ մենք ընկերակիցներ ենք հարսանեկան սրահում, որոնք վայելում են Փեսային՝ Մտթ 9:15:
2. Երկրորդ՝ մենք հյուրեր ենք, որոնք վայելում են Նրան՝ որպես մեր խնջույքի՝ Ղկս 14:15-17, Հյտ 3:20, 19:9:
3. Երրորդ՝ մենք կույսերն ենք, որոնք վայելում են Փեսայի գալ՝ Մտթ 25:1-13:
4. Չորրորդ՝ մենք կլինենք հարսը, որը բարձրագույն աստիճանի կվայելի Փեսային՝ Հյտ 19:7:

Է. Տիրոջ շարժման ուղղությունն այսօր հարսին՝ որպես Փեսայի զույգի, պատրաստելն է՝ փրկագնող Աստծու և Նրա փրկագնվածների հավիտենական ամուսնության համար՝ խխ. 7-8, 21:1-2, 9-10:

Ը. Մենք պետք է գիտակցենք, որ որպես Փեսան՝ Տեր Հիսուսը Եկողն է.

1. Նա գալիս է՝ հանդիպելու մեզ՝ որպես Իր հարսի:
2. Տիրոջ գալու մասին հայտնությունը ներառված է Նրա՝ Փեսան լինելու մեջ:

II. Մենք պետք է տեսնենք ու հասկանանք հարսի հասունությունը՝ Բ Կրթ 3:18, Հռմ 8:29, Եփս 4:13, 15, Եբր 6:1, Հյտ 19:7բ, 21:2, 9.

ՓԵՍԱՆ

Ա. Հյտ 19:7բ խոսքում ասվում է. «Նրա կինը պատրաստեց իրեն»:

Բ. Աստվածային կյանքի հասունության մեջ Քրիստոսին սիրողը դառնում է Սուլամիթան («Սուլամիթա»-ն «Սողոմոն» անվան իգական ձևն է). դա նշանակում է, որ նա դարձել է Քրիստոսի վերարտադրությունն ու պատճենը, որպեսզի համապատասխանի Նրան իրենց ամուսնության համար՝ Երգ 6:13, Հյտ 21:2, 9-10:

Գ. Հունարեն որպես «հասուն» թարգմանված բառը նշանակում է «վերջնակետին հասած».

1. Փոխակերպվել նշանակում է նյութափոխանակորեն փոխվել մեր բնական կյանքում. հասուն լինել նշանակում է լցվել աստվածային կյանքով, որը փոխում է մեզ՝ Եբր 6:1, Կող 4:12, Հռմ 12:2, Բ Պտ 1:3:
2. Փոխակերպման վերջին փուլը հասունությունն է՝ կյանքի լեցունությունը՝ խխ. 4-8:
3. Հասուն հավատացյալը ճանաչում է Քրիստոսի Մարմինը և հոգում նրա համար՝ ունենալով Մարմնի զգացողությունը և կենտրոնացած լինելով Մարմնի վրա՝ Կրք 12:16, 18-19, 21, 24:

Դ. «Հասուն» բառը, ինչպես որ այն գործածված է Նոր Կտակարանում, վերաբերում է հավատացյալների՝ Քրիստոսի կյանքում չափահաս և կատարելագործված դառնալուն, կյանք, որը նրանք ստացել են վերածննդի ժամանակ՝ Տտս 3:5, Ա Պտ 1:3, 23, Մտթ 5:48.

1. Մենք երբեք չպետք է գոհ լինենք մեզնից, այլ պետք է ձգտենք Քրիստոսի կյանքում աճի և հասունության՝ Փլպ 3:12, 14:
2. Մենք պետք է առաջ շարժվենք, բերվենք հասունության՝ հետևում եղածները մոռանալով և դեպի առջևի բաները ձգվելով, և ձգտենք Քրիստոսին լիակատար կերպով վայելելուն ու ձեռք բերելուն՝ հազարամյա թագավորությունում Քրիստոսին բարձրագույն կերպով վայելելու համար՝ խխ. 12-15:
3. Հոգևոր կյանքում հասունության նախապայմանը աստվածային կյանքում մշտապես աճելն է՝ Եփս 4:15:
4. Քրիստոսի կյանքում հավատացյալների աճի և հասունության վերջնական արդյունքը չափահաս այրն է՝ եկեղեցին՝ որպես Քրիստոսի Մարմինը, որն աճել է մինչև հասուն այր դառնալը՝ խ. 13:

Ե. Իր Թղթում Հակոբոսն օգտագործում է հողագործի լուսաբանությունը, որն անձկորեն սպասում է երկրի թանկագին պտղին՝ 5:7.

1. Տեր Հիսուսը, ըստ էության, իրական Հողագործն է՝ եզակի Հողագործը՝ Մտթ 13:3:
2. Մինչ մենք անձկորեն սպասում ենք Տիրոջ գալստյանը, Նա՝ որպես իրական Հողագործը, համբերատարությամբ սպասում է կյանքում մեր հասունությանը՝ որպես երախայրու և դաշտի հունձքի՝ Հյտ 14:4, 14-15:
3. Եթե աղոթենք. «Տե՛ր, շուտով վերադարձի՛ր», Տերը հնարավոր է՝ ասի. «Մինչ դուք սպասում եք Իմ վերադարձին, Ես սպասում եմ ձեր

հասունությանը. միայն ձեր հասունությունը կարող է արագացնել Իմ գալուստը»:

4. Մեզ համար շատ օգտակար է գիտակցելը, որ եթե լուրջ ենք տրամադրված Տիրոջ վերադարձին սպասելուն, պետք է կյանքում աճենք առ հասունություն:

Զ. Հասունության հասնել նշանակում է Քրիստոսին թույլ տալ լիովին ձևավորվել մեր մեջ. դա նաև նշանակում է լիովին փոխակերպվել Նրա պատկերին՝ Գղտ 4:19, Բ Կրք 3:18.

1. Մեր վերածննդից ի վեր Տերն աշխատում է մեր մեջ, որպեսզի մենք Նրա պատկերն ունենանք՝ խ. 18, Հռմ 8:29:
2. Երբ Տերը լիովին Իր պատկերը մեր մեջ ներդրած լինի և մեր միջոցով լիովին արտահայտված լինի, մենք կյանքում հասուն կլինենք՝ Եփս 3:16-17:

III. Եկեղեցին՝ որպես Քրիստոսի հարսը, պետք է լինի ռազմիկը, որպեսզի հաղթի Աստծու թշնամուն՝ 5:25-27, 6:10-18, Հյտ 19:7-9, 11-16.

Ա. Կղս 2:15-ը պատկերում է պատերազմը, որը տեղի էր ունենում Քրիստոսի խաչելության ժամանակ. այդ պահին Քրիստոսի խաչը տիեզերքի կենտրոնն էր:

Բ. Հոգևոր պատերազմի նպատակն Աստծու թագավորությունը բերելն է՝ Հյտ 12:10:

Գ. Հոգևոր պատերազմը Մարմնի հարց է. մենք ընդհանրական բանակ ենք, որը վարում է պատերազմը երկրի վրա Աստծու շահերի համար՝ 17:14, 19:14, հմմտ Բ Տմթ 2:4:

Դ. Քրիստոսը գալու է որպես մարտնչող Զորավար Իր հարսի՝ որպես Իր բանակի հետ, որպեսզի պատերազմի Հակաքրիստոսի դեմ Արմագեդոնի մոտ՝ Հյտ 19:11-21.

1. Երբ Քրիստոսը գա Իր բանակի հետ, կգա որպես Մարդու Որդին՝ Մտթ 26:64, Հյտ 14:14:
2. Որպես Մարդու Որդու՝ Նրան զույգ անհրաժեշտ կլինի, որը կհամապատասխանի Նրան և կլրացնի Նրան. այս զույգը Նրա հարսը կլինի՝ 21:2, 9:
3. Քրիստոսը կամուսնանա հաղթողների հետ, որոնք արդեն հաղթել են չարին:
4. Հարսանեկան զգեստը՝ Քրիստոսը, ում հայտնի ենք անում մեր կյանքով որպես մեր ամենօրյա արդարության, մեզ որակավորում է ոչ միայն հարսանիքին ներկա լինելու, այլև բանակին միանալու, որպեսզի Քրիստոսի հետ մարտնչենք Հակաքրիստոսի դեմ Արմագեդոնի մոտի պատերազմում՝ Մտթ 22:11-12, Հյտ 19:7-8, 14:

Ե. Երգ երգոցում տեսնում ենք, որ Քրիստոսի հաղթող սիրուհին Թերսայի պես գեղեցիկ և Երուսաղեմի պես հիասքանչ է դառնում, սակայն թշնամու համար նա դրոշակակիր զորքերի պես ահարկու է՝ 6:4, 10.

1. Քրիստոսին սիրողները պետք է միաժամանակ հիասքանչ և ահար-

կու լինեն, սակայն շատ հավատացյալներ կորցրել են Տիրոջ առջև իրենց հիասքանչ լինելն ու թշնամու առջև իրենց ահարկու լինելը՝ խխ. 4, 10.

ա. Քրիստոսին սիրողը գեղեցիկ և հմայիչ է Տիրոջ առջև, ամուր է ինչպես երկնային քաղաքը և մաքուր է ինչպես սրբարանը. միևնույն ժամանակ նա թշնամու և աշխարհի առջև հայտնի է անում իր հաղթանակի փառքը՝ խխ. 4, 10:

բ. Քրիստոսի հաղթող սիրուհին ոչ միայն հույսով լի ապագա և լիովին երկնային կյանք ունի, այլև հաղթողն է, որը մշտապես հաղթանակում է իր հաղթանակի մեջ՝ 3:7-8:

2. Ահարկու բանակը խորհրդապատկերում է այն, որ Տիրոջ հաղթողները սարսափեցնում են Աստծու թշնամուն՝ Սատանային՝ 6:4, 10.

ա. Թշնամուն սարսափեցնում է եկեղեցին, որը կառուցված է որպես Աստծու քաղաքը՝ Նեմ 6:15-16, Սղմ 102:12-16:

բ. Սատանան չի վախենում անհատապաշտ քրիստոնյաներից, նույնիսկ եթե նրանց թիվը հազարներով է հաշվվում, բայց նրան սարսափեցնում է եկեղեցին՝ որպես Քրիստոսի Մարմինը, ընդհանրական ռազմիկը, որը պատերազմում է նրա և նրա թագավորության դեմ՝ Եփս 6:10-20:

Զ. Դավիթը չարչարանքների մեջ պատերազմող Քրիստոսի նախատիպն է (Ա Թգ 25:28), իսկ Աբիգեան չարչարանքների մեջ Աստծու թագավորության համար պատերազմող եկեղեցու նախատիպն է (խխ. 2-42).

1. Ա Թագավորաց գրքի 25-րդ գլխից սկսած՝ Աբիգեան միշտ Դավիթ-ռազմիկի կողքին էր և հետևում էր նրան նրա պատերազմներում՝ խխ. 40-42:

2. Դավթի հետ Աբիգեայի ամուսնությունն այն բանի նախատիպն է, որ եկեղեցին հավաքագրվել է որպես բանակ պատերազմի համար՝ Եփս 6:10-20:

3. Աբիգեայի նախատիպը պատկերում է եկեղեցու մասնակցությունը հոգևոր պատերազմին Տեր Հիսուսի հետ միասին.

ա. Ոչ միայն Աստծու հավիտենական մտահղացումը պետք է կատարվի և Աստծու սրտի ցանկությունը բավարարվի, այլև Աստծու թշնամին պետք է պարտության մատնվի. դրա համար եկեղեցին պետք է ռազմիկ լինի:

բ. Հոգևոր պատերազմն անհրաժեշտ է, որովհետև Սատանայի կամքն ընդդիմանում է Աստծու կամքին՝ Մտթ 6:10, 7:21, Եսյ 14:12-14.

1) Հոգևոր պատերազմի աղբյուրը հակամարտությունն է աստվածային կամքի և սատանայական կամքի միջև:

2) Որպես եկեղեցին՝ մենք պատերազմում ենք, որպեսզի ենթարկենք սատանայական կամքը և պարտության մատնենք Աստծու թշնամուն՝ Հյտ 12:11:

3) Մեր հոգևոր քայլքն Աստծու մտահղացման իրականացման համար է. մեր ապրելակերպը Քրիստոսի բավարարության համար է, իսկ մեր պատերազմն Աստծու թշնամուն պարտության մատնելու և Նրա հաղթանակը պահելու համար է:

Է. Հոգևոր պատերազմի շնորհիվ Աստծու հավիտենական մտահղացումը լիովին իրագործվում է. «Աշխարհի թագավորությունը մեր Տիրոջ և Նրա Քրիստոսի թագավորությունը դարձավ, ու Նա թագավորելու է հավիտյանս հավիտենից»՝ 11:15բ:

© 2026 Living Stream Ministry